տէգներ ոսկիի թաղամասերում: Գործարաններ-ի սեռական գործողութիւնը հարիւր հազար ելեքտրական լամպարներով լուսաւորուած յայտարարութիւնների առջեւ:

Ու վարագոյրը իջեցրած վաղուան պատուհանների առջեւ:

* * *

Եւ ահա Արեւելքը:

Ի՞նչ է արեւելեան մտայնութիւնը: Իրողութեան մէջ, նա բազմատեսակ է եւ բազմադիմի: Եւ աւելացնենք, թէ քանի՞ անդամներ, Լոտիի եւ Ֆաուերի նման գրագէտները իրենց միջակ եւ բեկբեկ զգացողութիւններով, ժան ամֆիոնի երազանքով այլանդակել են այն, ինչ որ սովոր են անուանել Արեւելք: Փոքրիկ, փայլուն առարկաների եւ կեղծ բօսանտիզմի չուկայ: Անիլինի վառվռուն գոյներ՝ պարսկական խալիների ընդօրինակութիւնների վրայ: Սեռային վատթարումից առաջ եկած տաճկասիրութիւն, ոգեկան սկլերոզ: Մի խօսքով՝ Լոտին:

Դրա մօտ՝ պատկերները պատկերների վրայ են դիզում:

Լայնատարած եւ անծայր տափաստաններ, ուր ուռճազարդ բուսականութիւնը կառչում է երկնքի կապոյտին: Մեծ, մեռած տերեւի գոյնով, բազում թոքերով տարածութիւններ՝ ձիւնով կամ դալար անտառներով ծածկուած: Միակերպ, անծայրածիր դաշտեր՝ աչքերի համար եղակի զբօսանք: Դաշտ՝ աւելի հաստ, քան ովկիանոսի յատակը, աւելի խոր, քան կոհակների խաղը եւ հոսանքների շարժումը: Ամէն ինչ ձեզ կլանում է, ոչնչացնում ցանկութիւնը, անհետացնում զոռոզութիւնը, ճնշում կամքը: Դաշտանկարը գրոհ է տալիս անհատի վրայ, ներս է խուժում ուժգին թափով, մեղմացնում զգացողութիւնը, ենթարկում նրան անծայրին եւ մօտեցնում Միութեան:

Արեւմուտքում, երկրի ֆիզիքական կեղեւի ներդաշնակ ծալքերը, դալար բլուրներով, շարժուն դաշտերի մէջ վազող գետերով, պարտէզներով զարդարուած, շոյում են երեւակայութիւնը, վերաստեղծւում են եւ սրում զգացողութիւնը:

Այստեղ, ամէն ինչ ընթանում է դէպի անշարժութիւն:

Ասիայի հեռաւորութիւնների մէջ գործունէութեան թափը թուլանում է, իմացականութիւնը քօղարկւում, միտքը ազատագրւում է նիւթական աշխարհից, ծալւում, կենտրոնանում եւ իջնում անհատի խորքը: Մարդը ամուսնանում է մինակութեան հետ: Նրա հոգին սաւառնում է անուրջի եւ երազի թատրոնի առջեւ, ուր տեսիլքները անցնում են բենգալեան կրակով վառուած երկնքի վրայից:

Անապատը ճնշում է եւրոպացիին: Արեւելցին ոչինչ չի նկատում եւ իր վերացական անհատականութեան մէջ նա կառուցում է անիւթական տեսիլքներ, որոնք երբակի կեանք են ստեղծում: Նրա անշարժութիւնը լեցուն է ներքին եւ ուժգին գործողութիւնով, եւ ինչպէս, ժամանակին, Միջերկրական աւազանի յոյնը, նա ամբողջովին տարուած է մտաւոր հայեցողականութիւնով: Վերացական մտայնութիւնը կաղկղում է ուղեղը, կենտրոնացնում միտքը եւ հեռացնում նիւթական տպաւորութիւնները: Ամէն ինչ մղում է մարդս դէպի անհունը: Ամենօրեայ, անվերջ յոյզերը դոները փակում են անհատի առջեւ, անկարելի դարձնում գործունեայ մարդուն՝ գաղափար իսկ կազմել նրա մասին, ապրել նրա հետ, առաջ բերել հոգեկան որոշ բովանդակութիւն: Այնտեղ, անշարժ, գրեթէ քարացած մարդը ժամերով սպասում է, որպէսզի կարողանայ բարձրանալ տեսիլքների վեհափառութեան, բանալ հոգեկան հարստութիւնների դանձը, կենտրոնացնել միտքը եւ ուժ դնել՝ երկարօրէն վայելելու համար անհունի աշխարհը:

Մանկութեան հասակից նա գիտէ, որ բանականութիւնը իր տրամաբանական կառուցուածքներով թերի գործիք է: Բանականութիւնը ոչ միայն չի նպաստում նրա ձգտումին միանալ բացարձակին, այլ արգելք է հանդիսանում: Նա ընտրում է ուրիշ միջոցներ եւ ոչընչացնում այն բաժանումը, որ գոյութիւն ունի նրա եւ բնութեան միջեւ, նրա եւ իրերի միջեւ: Նա ձուլւում է գերագոյն միութեան հետ, ուր անհատական պատրանքները ոչնչանում են, ուր ստեղծւում է նոր, ազատ, ամբողջա-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան